# Մարզպետի մոտ քննարկվեցին ոռոգման ջրի մատակարարման  խնդիրները

Մարզպետ Գաբրիել Գյոզալյանի մոտ կայացավ խորհրդակցություն, որի թեման ոռոգման ջրի մատակարարման հարցն էր: Մարզպետ Գաբրիել Գյոզալյանի հրավերով խորհրդակցությանը մասնակցում էր ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների եւ բնական պաշարների  նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ Արսեն Հարությունյանը:

Գաբրիել Գյոզալյանը ՋՕԸ-երի պատասխանատուներին եւ  համայնքների ղեկավարներին տեղեկացրեց, որ հանդիպումը կազմակերպվել է, քանի որ համակարգում բազմաթիվ խնդիրներ են կուտակված, որոնց լուծման համար համատեղ քննարկումների անհրաժեշտություն կա:

-Ոռոգման ջրի մատակարարման հարցը մենք փորձում ենք լուծել հիմա, որպեսզի ոռոգման  ամենաթեժ պահին անհարկի լարվածություն չլինի, եւ գյուղացին այս հարցում խնդիրներ չունենա:

Մարզպետը ներկայացրեց, որ արդեն իսկ կարգավորված  են Պարտիզակում եւ Աշնակում առկա հիմնախնդիրները, որոնք տարիներ շարունակ լուծում չէին ստանում: Սակայն,  օրախնդիր հարցեր կան Ն. Բազմաբերդ, Կաքավաձոր, Կաթնաղբյուր եւ այլ համայնքներում:

Այնուհետեւ Արսեն Հարությունյանը ներկայացրեց 2016 թվականին մարզում իրականացրած ծրագրերը եւ նշեց, որ 2017 թվականին, ընդհանուր առմամբ, մարզում իրականացվելու են  2 մլն. 960 հազար դրամի ծրագրեր: Այդ շրջանակում, մասնավորապես, ներառված են  Քուչակ, Ուշի, Կարբի, Աշտարակ, Բազմաղբյուր, Ուջան, Փարպի, Բյուրական, Տեղեր համայնքները:  Ներկայացված ծրագրերի մեջ նա կարեւորեց 2018 թվականին մեկնարկող Կապսի ջրամբարի կառուցման ծրագիրը, որով նախատեսվում է մեծ քանակի ջուր մղել դեպի Արագածոտնի մարզ:

Իրենց համայքներում առկա խնդիրները ներկայացրին Աշնակի, Մաստարայի, Արտենիի, Հացաշենի, Արագածավանի, Կաթնասբյուրի համայնքների ղեկավարները: Քննարկված հարցերի շուրջ տրվեցին պարզաբանումներ եւ համապատասխան հանձնարարականներ:

Խորհրդակցության ավարտին պաշտոնյա մասնագետները մեկնեցին համայնքներ՝ առկա խնդիրներին տեղերում  ծանոթանալու եւ հնարավորինս լուծումներ գտնելու նպատակով: